Հավելված N 7
ՀՀ փոխվարչապետի
N 577-Ն որոշման

«ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԿԱՐԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԵԴԱԼԻ ՏԵՍԱԿԸ, ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Փրկարար ծառայությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալը (ձևը կցվում է) շնորհվում է փրկարարական ծառայողներին:

2. «Փրկարար ծառայությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալը շնորհում է պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. «Փրկարար ծառայությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և ունի հնգանիստ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնություն ունեցող կարմիր գույնի մետաքսյա ժապավենով: Ժապավենի եզրերն ամփոփված են 2 մմ լայնություն ունեցող կանաչ գույնի շերտագծով: Ժապավենի կենտրոնով, վերից-վար անցնում է 3 մմ լայնություն ունեցող դեղին գույնի մեկ շերտագիծ: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունը՝ 39 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևինը՝ 47 մմ, լայնությունը՝ 1 մմ: Կախիչի վերին մասի երկարության կենտրոնից մինչև ներքին գագաթը՝ վերից-վար 50 մմ է: Կախիչի հակառակ երեսում ամրացված է գնդասեղ՝ հագուստին ամրացնելու համար: Սկավառակի տրամագիծը 32 մմ է, հաստությունը՝ 3 մմ: «Փրկարար ծառայությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալի սկավառակը պատրաստվում է ոսկեփայլ մետաղից: Սկավառակի դիմերեսի եզրագծին զուգահեռ՝ վերևի մասում առկա է «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ» շրջանաձև հայերեն գրությունը, որը երկու կողմից զարդարված է դափնու տերևներով, իսկ ներքևի հատվածում՝ եզրագծին զուգահեռ առկա է «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» շրջանաձև հայերեն գրությունը:

4. «Փրկարար ծառայությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալի կենտրոնում տեղակայված է երկրագնդի խորհրդանիշը և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ռելիեֆային տարբերանշանը: Երկրագնդի խորհրդանիշը ներկված է մուգ կապույտ էմալով: Մեդալը եզրապատված է 1 մմ լայնություն ունեցող կողային շերտով: Մեդալի սկավառակը ոսկեփայլ է, պատրաստվում է նեյզիլբերից: Սկավառակի տրամագիծը 32 մմ է, հաստությունը՝ մոտավորապես 3 մմ: Սկավառակի դիմերեսի եզրագծին զուգահեռ՝ վերևի մասում առկա է «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ» շրջանաձև հայերեն գրությունը, որը երկու կողմից զարդարված է դափնու տերևներով, իսկ ներքևի հատվածում՝ եզրագծին զուգահեռ առկա է «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» շրջանաձև հայերեն գրությունը:

5. «Փրկարար ծառայությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալի կենտրոնում տեղակայված է երկրագնդի խորհրդանիշը և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ռելիեֆային տարբերանշանը: Երկրագնդի խորհրդանիշը ներկված է մուգ կապույտ էմալով:

6. «Փրկարար ծառայությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալի սկավառակի հակառակ երեսի կենտրոնական մասում գրվում է՝ «20 ՏԱՐՎԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» բառերը:

9. «Փրկարար ծառայությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալի հետ տրվում է վկայական:

Ձև

«Փրկարար ծառայությունում երկարամյա

ծառայության համար» մեդալի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ